Շենգենյան վիզայի դիմում-հայտերի անհատական հերթագրման համակարգ

Շենգենյան վիզայի դիմում-հայտերի հերթագրման համակարգը հաշվի է առնում ժամանման նպատակը և հնարավորություն է տալիս խմբային հերթագրումների՝ դիմումատուների հատուկ կատեգորիաների համար:

Հերթագրման համար անհրաժեշտ է համապատասխան ձևաչափով էլեկտրոնային նամակ ուղարկել ստորև նշված էլեկտրոնային փոստի հասցեներից մեկին՝ համաձայն ձեր գործառույթի նպատակի:

Նպատակներ՝ **ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ / ԱՆՁՆԱԿԱՆ ԱՅՑ / ԱՅԼ**,
Yerevan.Schengen@mzv.gov.cz

Նպատակներ՝ **ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ / ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (+ մասնակցություն կրթական նախագծերի) / ՍՊՈՐՏ / ՄՇԱԿՈՒՅԹ**,
Yerevan.Academy@mzv.gov.cz

Նպատակներ՝ **ԲԻԶՆԵՍ / ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ / ԱՇԽԱՏԱՆՔ**,
Yerevan.Business@mzv.gov.cz

Նպատակ՝ **ՀՐԱՎԵՐ** (եթե հրավերը հաստատված է Չեխիայի Հանրապետության միգրացիոն վարչության կողմից):
Yerevan.Invitation@mzv.gov.cz

Էլեկտրոնային փոստի պահանջները՝

Էլեկտրոնային նամակի «վերնագիր» բաժինը պետք է պարունակի **միայն անձնագրի համարը**. այլ տեքստ կամ ավելորդ նիշ չի կարող ներառվել (տես ստորև հերթագրման էլեկտրոնային նամակի նմուշը):

Նամակը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

Անուն ազգանուն
Ծննդյան ամսաթիվ DD.MM.YYYY ձևաչափով
Ճամփորդության նպատակ (նշեք միայն մեկ հիմնական նպատակ)
Հեռախոսահամար

Էլեկտրոնային նամակի լեզուն պետք է լինի **չեխերեն** կամ **անգլերեն**:

Էլեկտրոնային նամակը չպետք է պարունակի որևէ այլ տեքստ կամ նիշ (տես ստորև ներկայացված հերթագրման էլեկտրոնային նամակի նմուշը):

Եթե վիզայի համար դիմում-հայտ է ներկայացնում **ամբողջ ընտանիքը** (**մայր, հայր, անչափահաս երեխաներ՝ մինչև 18 տարեկան**), նամակի «վերնագիր» բաժինը պետք է ներառի ընտանիքի բոլոր անդամների անձնագրերի համարները: Ընտանիքի բոլոր անդամները նույնպես պետք է նշված լինեն էլեկտրոնային նամակի տեքստում:

Էլեկտրոնային նամակի հավելվածները՝

Բոլոր գործառույթների համար պահանջվում է **անձնագրային տվյալների էջի սկան**:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ (+ուսումնական նախագծերի մասնակցություն), ՍՊՈՐՏԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԲԻԶՆԵՍԻ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՀՐԱՎԵՐԻ **դեպքում անհրաժեշտ է նաև կից ներկայացնել ժամանման նպատակը հաստատող փաստաթղթի սկան**: ՀՐԱՎԵՐԻ դեպքում

անհրաժեշտ է կցել նաև **հրավերը**, որը **հաստատված է** Չեխիայի Հանրապետության միգրացիոն վարչության կողմից:

Բոլոր հավելվածները պետք է լինեն միայն **PDF ձևաչափով**: Պետք է հետևել **մեկ փաստաթուղթ-մեկ ֆայլ** սկզբունքին (բոլոր փաստաթղթերը պետք է սկանավորվեն առանձին, ոչ թե մեկ ֆայլում):

Կարևոր պայմաններ՝

- Յուրաքանչյուր անձ կարող է դիմել հերթագրման համար միայն մեկ էլեկտրոնային փստի հասցեով: Սա նշանակում է, որ անհատի/ընտանիքի հերթագրման դիմում-հայտը կարող է ներկայացվել միայն մեկ անգամ: Միևնույն անձի/ընտանիքի մի քանի դիմում-հայտերը, որոնք ներկայացված են տարբեր էլեկտրոնային փոստի հասցեներով, մերժվելու են: Սա նշանակում է՝ անհատը/ընտանիքը կարող է դիմում-հայտ ներկայացնել մեկ անգամ:
- Ընտանիքը կարող է միասին դիմել մեկ էլեկտրոնային նամակով՝ նույն էլեկտրոնային փոստի հասցեից: Եթե երեխաներին (մինչև 18 տարեկան անչափահասներ) նույնպես վիզա է հարկավոր, նրանք ավտոմատ կերպով հանդիպման օր են ստանում են իրենց ծնողների հետ միասին: Հետևաբար, ծնողները և երեխաները (մինչև 18 տարեկան անչափահասներ) հերթագրման համար կարող են օգտագործել նույն էլեկտրոնային փոստի հասցեն:

Խմբերի հերթագրումներ (մինչև 25 հոգի)՝

Ոչ տուրիստական խմբերի (օրինակ՝ պաշտոնական պատվիրակություններ, սպորտային թիմեր, արվեստագետների խմբեր և այլն) խմբային հերթագրումների համար խնդրում ենք օգտագործել հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեն՝
yerevan.group@mzv.gov.cz

Այս դեպքում հերթագրման համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակի «վերնագիր» բաժնում ավելացնել բոլոր անձանց ճամփորդական փաստաթղթերի համարները, իսկ էլեկտրոնային նամակի տեքստը պետք է պարունակի վերը նշված բոլոր տեղեկությունները բոլոր դիմումատուների համար: Կից պետք է լինեն անձնագրային տվյալների էջերի սկան տարբերակները և ժամանման նպատակը հաստատող փաստաթուղթ բոլոր հերթագրված անձանց ցուցակով:

Խմբի առավելագույն քանակը՝ 25 հոգի:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ զբոսաշրջության, այցելությունների, բիզնեսի և աշխատանքի նպատակների դեպքում միշտ պետք է հերթագրվել անհատական:

ՎԵՐՈՆՇՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆԱՄԱԿԸ ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ ԿՋՆՋՎԻ:

Ո՞րն է հաջորդ քայլը:

Եթե դուք հետևում եք վերը նշված բոլոր պահանջներին, ապա կստանաք հանդիպման ամսաթվով պատասխան նամակը 7 աշխատանքային օրվա ընթացքում: Պատասխան նամակը կստանաք այն էլեկտրոնային փոստի հասցեին, որով կատավել է հերթագրումը: Վիզայի դիմում-հայտը ներկայացնելու համար հաստատված հերթագրումների քանակը և հաստատված օրերը կարգավորվում են Երևանում Չեխիայի Հանրապետության դեսպանատան հյուպատոսական բաժնի կարողությունների համապատասխան: **Դիմում-հայտերի ժամկետային սահմանափակումները ֆիքսված են և պետք է հարգվեն դիմումատուների կողմից: Ուշ ներկայանալու և նախապես չտեղեկացնելու դեպքում վիզայի դիմում-հայտը չի ընդունվի:**

Վիզայի դիմում-հայտերի հերթագրման օրերը՝

Վիզայի դիմում-հայտերի հերթագրումները վերը նշված ձևով տեղի են ունենում ամեն ամսվա **15-ին** և **30-ին** (փետրվարին հերթագրումները տեղի են ունենում այդ ամսվա 15-ին և ամսվա վերջին օրը)՝ **ՀՀ տեղական ժամանակով ժամը 20:00-ին**: Հերթագրումը միշտ սկսվում է նույն ժամին:

ՀԵՐԹԱԳՐՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է:

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՅՑԻՑ ՈՉ ՇՈՒՏ, ՔԱՆ 6 ԱՄԻՍԸ և ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 15 ՕՐԸ:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ, ՈՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ: